ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» օգոստոսի 2026 թվականի N:364-Ա ք.Գյումրի

ՎԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N:2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման կարգի» 3-րդ և 7-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N:1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 20-րդ կետի դրույթներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանի 2026 թվականի օգոստոսի 6-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանին 2026 թվականի օգոստոսի 6-ին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փորձաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների գնահատման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նահապետավանի միջնակարգ դպրոց» և «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության ներկայացման և ընտրության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N:1653-Ա հրամանով

ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2026 թվականի օգոստոսի 6-ին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է